546. ՏԱՊԱՆԱՔԱՐ, *ընկած է ս. Գրիգոր Լուսավորչի բակում. վրան մեկ լուծ եզներ արոր են քաշում, շուրջը՝*



ԽԱՉՍ ՄԱԼՔՈՒՄ[ԻՆ], ՔԱՄԱԼԻՆ:

48. ԽԱՉՄԱՍ ԳՅՈՒՂ

Գյուղամիջում կա մի թաղակապ եկեղեցի, վրան փոքր զանգակատուն. կոչվում է ս. Ստեփանոս, համաձայն ներքոգրեալ արձանագրությունների շինել է ուստա Հուսեփը։

547. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ *մուտքի բարավորի վրա, 1 տող.*

ԹՎԻՆ :ՌՃ: (1651):

Հրատ. Բարխուդարեանց, 100։

548. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ *մուտքի արևելյան կողին.*

Ես ուստա Յուսէփ եւ Գէւորգ լըմանա, եկեղեցիս շինեցի յիշատակ. ով որ տեսնոյ, Աստուած ողորմի ասէ:

Հրատ. Բարխուդարեանց, 100։

49. ՂԱՎԱԽԱՆ ԳՅՈՒՂ

Եկեղեցին շինված է 1871 թ., բայց գյուղի հյուսիսային կողմում տարածվում է գերեզմանատունը, ուր կանգնած են փոքրիկ մատուռը և մի քանի խաչքարեր։

549. ԽԱՉՔԱՐԻ *վրա.*

ԹՎԻՆ :ՋԴԷ: (1548). Ես Շահատր կանգնեցի խաչս հայր Պախա, մա[յ]ր իմ Շահմաս . . . . :

Հրատ. Բարխուդարեանց, 110։

50. ԳԻՇԻ ԳՅՈՒՂ

Գյուղի եզրին, ձորակի աջ ափին, աղբյուրի մոտ կա մի մատուռ, որը կոչվում է «Ոսկլանց խաչ» և շինված է XIX դարում, բայց մոտի գերեզմանատունն ավելի հին է։

550. ԽԱՉՔԱՐԻ *վրա.*

Այս է տապան Պակնայզարի որդի Աղաբէկ յուզպաշին. :ՌՃՀԲ: (1723):

Հրատ. Բարխուդարեանց, 120։

51. ԾՈՎԱՏԵՂ ԳՅՈՒՂ

Գյուղի արևելյան եզրին, բլրի վրա գտնվում է գերեզմանատունը, որի կենտրոնում կառուցվել է Մելիք Փաշայան տոհմի դամբարանատունը։ Հուշարձանների այս վերջին խումբը բաղկացած է եղել երեք իրար կից կիսաղետնափոր մատուռ-դամբանատներից և մի թաղածածկ փոքր եկեղեցուց։ Բոլորի մեջ եղել են մեծ, տափակ և սև քարից շինված գերեզմանաքարեր՝ առանց տապանագրերի, և դրանց գլխին կանգնած նույն քարից խաչքարեր՝ գեղեցիկ քանդակներով ու արձանագրություններով։ Այժմ շենքերի միայն հիմնապատերն են մնացել՝ ներսը լցված քարի և կրաշաղախի բեկորներով։ Մի քանի խաչքարերի վերին մաս-

որ մենք բաց գտանք և կազմեցինք դրանց արձանագրությունների գծագրերը, մնացածներն առնում ենք նախկին հրատարակիչներից։

Եկեղեցի-դամբարանը կոչվում է Կարմիր եկեղեցի։

***551. ԽԱՉՔԱՐ,** մեծ, գեղաքանդակ, կանգնած է Ա. դամբարանի մեջ, երևում է միայն վերին մասը. քիվին 2 տող.*

ԹՎԻՐԼՍԻՀԱԴՄՏԴԻԹԱՌՀՆՈՐԴՄԵԼԻՔՓԱՇԻ



ԹՎ⌊ԻՆ⌋ :ՌԼԵ: (1586) Ի ՀԱ⌊ՅՐԱ⌋-Պ⌊ԵՏՈՒԹԻ⌋. ՏՐ ԴԱՎԹ⌊Ի⌋, Ա-Ռ⌊Ա⌋ՋՆՈՐԴ⌊ՈՒԹԻ.⌋ ՄԵԼԻՔ ՓԱ-ՇԻ:| Պ⌊Ե⌋Տ⌊Ր⌋Ո⌋Ս ԷՊ⌊Ի⌋ՍԿՈՊՈ⌋Ս:

Հրատ. Բարխուդարեանց, 106։ Լալաեան, II, 49։

***552. ԽԱՉՔԱՐ,** մեծ, գեղաքանդակ, կանգնած է Ա. դամբարանի հյուսիսային մասում. երևում է միայն վերին մասը. քիվը՝ ջարդոտված.*

ԹՎ:Ռ· · · ·ՌԹԻՏՐՅՀՍԻԱՌՀՆԴՌԹԻՄԼԻՔՓԱՇԻՆՑ

ԹՎ⌊ԻՆ⌋ :ՌԻԵ: (1576) Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻ. ՏՐ. Յ⌊Ո⌋Վ⌊Հ⌋Ա⌊ՆԻ⌋ՍԻ, ԱՌ⌊Ա⌋ՋՆ⌊Ո⌋Ր-ԴՈՒԹԻ. ՄԷԼԻՔ ՓԱՇԻՆ:| ՅԱՆՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՍ ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՆԳ-ՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ԵՂԲԱՒՐ ԻՄՈՅ ՂԱԶԱՐԻՆ. ԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ:

Ծանոթ. *Ինչպես երևում է, առաջին տողն է եղել քիվին, մնացածը՝ ստորին մասերում, բայց հրատարակիչների մոտ չի նշված ստույգ տեղադրությունը։*

Հրատ. Ջալալեանց, II, 333։ Բարխուդարեանց, 107։ Լալաեան, II, 49։

***553. Ա. ԴԱՄԲԱՐԱՆ-ՄԱՏՈՒՌԻ** մուտքի ճակատակալ քարի վրա.*

թվ⌊ի⌋ն⌋ :ՌՀ: (1621). Դաւիթ եպիսկոպոս. յիշատակ է եկեղեցի վանքս որ լինի սա դամբարան և շիրիմ մերոց նախնեաց:

Ծանոթ. *Ջալալյանցի մոտ՝* Պետրոս եպիսկոպոս *և :ՋԾԵ: թիվ։*

Հրատ. Ջալալեանց, II, 33։ Բարխուդարեանց, 106։ Լալաեան, II, 49։

***554. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ,** վեմ-քարի վրա.*

Դաւիթ եպիսկոպոս

Հրատ. Բարխուդարեաց, 107։

***555. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ,** բեմի խաչի վրա*

Դաւիթ աբեղա կանգնեցի զխաչս Աւան վարդապետի Տառոնե[ց]ու[յ] · · և զիս իշա:

Հրատ. Բարխուդարեանց, 207։ Լալաեան, II, 49։

***556. Բ. ԴԱՄԲԱՐԱՆ-ՄԱՏՈՒՌԻ** մեջ, մեծ խաչքարի վրա.*

Այս է Սահակ եպիսկոպոսն, որ փոխեցաւ · · · *Մյուս կողմի վրա՝* Անուամբն Աստուծոյ. ես Պետրոս եպիսկոպոս, Դաւիթ Խանայանս կանգնեցինք զխաչս ի փրկութիւն Սահակ եպիսկոպոսին. աղաւթեցէք:

Հրատ. Բարխուդարեանց, 107։ Լալաեան, II, 49—50։

557. ՆՈՒՑՆ ՏԵՂՈՒՄ. հարավային պատին ագուցված մի խաչքարի բեկորի վրա, ներքուստ.

Անուն տեառն Աստուծոյ. Եւ Մեիկ Հացգերզ(?) կանգնեցի զխաչս որդոյ իմոյ Սադիկայ և որ Եւայ ու Արղուն ծորոյ խոց. Աստուած ողորմի . . . .

Ծանոթ. Անշուշտ, սխալաշատ վերծանում է, հնարավոր է թերևս Մեիկ անունը ուղղել Մելիք:

Հրատ. Բարխուդարեանց, 107։

558. Դ. ՄԱՏՈՒՈՒՈՒ մեջ կանգնած գեղաքանդակ խաչքարի վրա.

Կամաւ ամենակալին Աստուծոյ, ես Մելիք Աւան կանգնեցի զխաչս ի փրկութիւն հաւր իմոյ Մելիք Պապին, մաւրն իմոյ Խոնդի խաթունին. ով որ յիշէ ի տէր յիշեսցի աւ Աստուած. թվին :ՌԺԵ: ին (1566):

Ծանոթ. Ջալալյանցը Մելիք Աւան-ի փոխարեն ունի Մելիք Աղամ:

Հրատ. Ջալալեանց, II, 334։ Բարխուդարեանց, 107։ Լալաեան, II, 50։

559. ՆՈՒՑՆ ՏԵՂՈՒՄ. այլ խաչքարի վրա.

Կամաւ ամենակալին Աստուծոյ ես Մելիք Աղամ, որդի Մելիք Պապին, որդոյ Հախիջանայ, թոռանց որդոյն Թումասին, որդոյ մեծի իշխանին Աւանայ կանգնեցի զխաչս ի փրկութիւն նախնեաց մերոց. ով երկրպագէ, յիշեցէ ի տէր Աստուած զձեզ յիշէ:

Հրատ. Ջալալեանց, II, 333—334։ Բարխուդարեանց, 107 (առանց վերջին նախադասության)։ Լալաեան, II, 50։

560. ՆՈՒՑՆ ՏԵՂՈՒՄ. այլ խաչքարի վրա.

Իշխանութեան Թահմազին, հայրապետութեան տեառն Գրիգորիսի, առաջնորդութեան ուխտիս Սահակայ եպիսկոպոսի . . . .

Հրատ. Բարխուդարեանց, 107։ Լալաեան, II, 50։

52. ՃԱՐՏԱՐ ԳՅՈՒՂ—ԵՂԻՇԱ ԿՈՒՍԻ ԱՆԱՊԱՏ

Դանվում է մի լայնանիստ և բարձր լեռան գագաթին, որն արձանացած է Դունել Ճարտար, Ղուղի Ճարաար և շրջապատի այլ գյուղերի արանքում։ Շինված է ճեղքված քարերով, միայն մուտքը և պատուհանները ձևավորված են սրբատաշ և քանդակազարդ քարերով։ Երկու սյուների և որմնամույթերի վրա կանգնած է մի ընդարձակ դահլիճ, կենտրոնում փոքր գմբեթ՝ զանգակատնով։

Ըստ արձանագրության շինված է 1675 թվականին, ուստա Դաբրիելի ձեռքով, բայց այդ, հավանաբար, մեծ նորոգում է եղել միայն, որովհետև եկեղեցու հիմնապատերն ավելի հին են և պատերի մեջ կան ավելի հին թվականներ ունեցող մանր արձանագրություններ։ Բեմի տակ է գտնվում Եղիշա կուսի սառրերկրյա դամբարանը։ Հայտնի է, որ միայն քրիստոնեության վաղ դարերում էին եկեղեցիների բեմերի տակ նշանավոր սրբերի դամբարաններ կառուցում, ինչպես Հռիփսիմեինը՝ Էջմիածնում, Մ. Մաշտոցինը՝ Օշականում, Աղվանից լուսավորիչ Գրիգորիսինը՝ Ամարասի վանքում և այլն։

Անապատի միջավայրում գտնվել են հին մշակույթի ուրիշ հետքեր ևս. նրա մոտակա Դունել Ճարտար գյուղի եկեղեցին թեև շինված է 1787 թ., բայց նույն գյուղում ակումբ-թատրոնի և դպրոցի շենքերը կառուցելու ընթացքում բացվել էին ինչ-որ հին շինության մասեր, որոնց մի քանի քանդակազարդ բեկորները պահվել էին բակում։ Դրանք, անկասկած, IV—V դարերի բազիլիկ եկեղեցու կամ նույնիսկ ստորերկրյա դամբարանի մասեր էին՝ խիստ բնորոշ քանդակներով[1]։

Այս հուշարձանից մեր ժողովածուն պարունակում է ինը արձանագրություն, որոնցից 3-ը հրատարակվում են առաջին անգամ։

[1] Մեր առաջարկով դրանք պետք է տեղափոխվեին Ստեփանակերտի գավառագիտական թանգարանը։